ԴԿԴ ավագ դպրոց ընդունվելու համար անգլերենի իմացությունը նախապայման է: Կարևոր է, որ դպրոց ընդունված բոլոր աշակերտներն ունենան նվազագույնը անգլերենի իմացության A2 մակարդակը:

Առաջին փուլը գրավոր ստուգաթեստն է (grammar, vocabulary, reading, listening, writing հնարավոր բաժիններով): Հաջորդ փուլը՝ բանավոր հարցազրույցն է: Եթե դիմորդն ունի անգլերենի իմացության A2 և բարձր մակարդակը հաստատող միջազգային քննության (Cambridge ESOL KET, TOEFL JUNIOR, IELTS) պաշտոնական փաստաթուղթ, որը ստացվել է ընդունելության քննություններին նախորդող վեց ամիսների ընթացքում, անգլերենի ստուգաթեստ հանձնելը պարտադիր չէ: Անգլերենի ստուգաթեստին կարող են չմասնակցել նաև այն դիմորդները, ովքեր ավագ դպրոցի ընդունելությանը նախորդող առնվազն վերջին 24 ամիսների ընթացքում ուսանել են անգլալեզու դպրոցում և բոլոր առարկաներն ուսումնասիրել են անգլերեն լեզվով: Դիմորդները պետք է ներկայացնեն այս փաստը հավաստող որևէ հիմք:

Ընդունելության դիմումները կընդունվեն միայն A2 մակարդակը ապահովելու դեպքում:

Ուշադրություն: Եթե լինեն դիմորդներ, որոնց արդունքները չեն բավարարի A2 շեմի պահանջը, դպրոցը պատրաստ է ընդառաջելու նրանց և տալու հնարավորություն՝ մասնակցելու ընդունելության գործընթացին՝ վերահանձնելով ստուգաթեստը օգոստոս ամսին: Այս դեպքում դիմորդը և նրա ծնողը ստորագրում են համապատասխան դիմում՝ նշելով, որ տեղյակ են այս պայմանին և գիտակցում են, որ անգլերենի իմացության պահանջվող շեմը չապահովելու դեպքում դիմորդի և դպրոցի միջև «Ուսումնառության մասին պայմանագիր» չի կնքվի:

Ստուգաթեստին պատրաստվելու համար օգտակար հղումներ

Քերականական նյութեր, թեստեր և վարժություններ

Անգլերենի գրավոր ստուգաթեստի և լսելու հմտությունների հանձնարարության նմուշային օրինակ (հնարավոր են փոփոխություններ):

Նախորդ տարիների քննական նմուշներին կարող եք ծանոթանալ ստորև.

- Անգլերենի ստուգաթեստ (քննական տարբերակ, պատասխաններով տարբերակ)
- Լսելու հմտությունների հանձնարարություն՝ առաջադրանք 1, առաջադրանք 2

- Անգլերենի ստուգաթեստ (բնական տարբերակ, պատասխաններով տարբերակ)
- Լսելու հմտությունների հանձնարարություն՝ առաջադրանք 1, առաջադրանք 2
- Անգլերենի ստուգաթեստ (բնական տարբերակ, պատասխաններով տարբերակ)
- Լսելու հմտությունների հանձնարարություն՝ առաջադրանք 1, առաջադրանք 2